

Պ. Աւետիս Զարգարեանց ազգայնացի, որ թիֆլիսում է բնակվում, հասցրեց մեր խմբագրութեանը 3 բուրլ յոգուտ վաճառքի երկրաչափից քննադատներին և 3 բուրլ յոգուտ «Միացեալ ընկերութեան»։

Ներկայ համարից սկսում ենք ազգայնացի պ. թիֆլիսեանի դատախազութիւնը «Թիֆլիսի» մէջ տպագրութեանը յետոյ կը հրատարակուի առանձին գրքովով, որ ինչպէս իմացանք, խոստացել է իր ծախսով հրատարակել պ. Ալեքսանդր Թումանյան Մէլիք-Հայկազեանց։

«Մշակի» վեց ամսվայ բաժանորդագրութիւնը արդէն սկսված է։ Բոլորիս 1-ից ներկայ թիւի մինչև յունվարի 1-ը 1882 թիւ մեր լրագրի գինը 6 բուրլ է։ Օտարաքաղաքացիք պէտք է ուղղակի գիմեն խմբագրութեանը։

Այսօր, յունվարի 1-ին պ. Սուքիասեան տալու է Արթուրեան թատրոնում մի կոնցերտ-ներկայացում, մասնակցութեամբ վրացի դերասանների և հայ սիրողների։ Բոյս ունենք որ հասարակութիւնը իր ներկայութեամբ կը յարգէ պ. Սուքիասեանի կոնցերտը։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՑ ԽՆԴԻՐ

Բոլոր լրագրիները հաստատում են Վրաց-ստանի պարլամենտում ասած համակրական խօսքերը հայոց խնդրի վերաբերութեամբ։ Մի և նոյն ժամանակ լրագրիները հաղորդում են որ անգլիական նոր դեսպան պ. Պոլսի մէջ, լորդ Կրֆլըրին, թիւրքաց մայրաքաղաքը հասնելուն պէս Սուլթանի մօտ

տեսակցութեանն արժանացաւ։ Կրֆլըրին խօսելով սուլթանի հետ յոյս յայտնեց որ թիւրքաց կառավարութեան հօգացողութեան ղեկավար առարկայ լինելու են երկու խնդիրներ՝ հայոց խնդիրը և թիւրքայի ֆինանսական խնդիրը։

Բայց պ. Պոլսի «Վազըթ» թիւրքաց լրագրից հաւատացնում է թէ Կրֆլըրին հայոց խնդրի վերաբերութեամբ համաձայն չէ իր նախորդի, Կոշէնի մտքերի հետ, իսկ այն բազմից յետոյ, երբ իշխան Բիսմարկ ստանութեամբ ընդունեց Կոշէնի դէպի գերմանական կառավարութիւնն ուղղած հրահանգը աջակցել Անգլիային հայոց խնդրի լուծման վերաբերութեամբ, Կրֆլըրին իր կառավարութեանը իրր թէ հակահրահանգ է ստացել, այսինքն հրաման է ստացել չը շտապել հայոց խնդրի լուծման վերաբերութեամբ, այլ սպասել պատհի րօպէի։

Որքան ստոյգ է «Վազըթ» լրագրի տեղեկութիւնը, մեզ դժուար է ասել, միայն մենք մեզ լոյս կը տանք փոքր ինչ կասկածելու այդ տեղեկութեան ճիշդ լինելը, նախ որ Անգլիան մեծ պէտք չունի Գերմանիայի օգնութեան արևելեան խնդրի լուծման վերաբերութեամբ, երկրորդ՝ Կապուտոնի արտասանած հռոնդոտ և հաստատամիտ խօսքերը պարլամենտի մէջ այն ժամանակ յայտնվեցան, երբ Գերմանիայի, կամ առհի լուս է ասել Բիսմարկի մերժումը արդէն յայտնի էր Անգլիային և ամբողջ Եւրոպային։

Նորդում են մինչև Գայլ գետի ափերը, որ հոսում է սարի ստորերկրից։ Նորա եղբորին Բաղդր պատմացնում է աշխարհի անիւր կանգնած ոսկի և արծաթի կոյտերի և անգին աւելուքների մէջ։ Նորան մօտեցող մահապաշտներ իսկայն կը մեռնին Միայն Համարձման քիչերի կէտին, երբ երկինքն ու գետինքը իրար են խառնվում, ինչպէս Մհերի դուռը, նոյնպէս և Չարիսի ֆէլէկի մուտքը բացվում է ամենի համար և սիր ժամանակին մտնում է, ստանում է թաղելիք իր ցանկացած բաժինը։

Այդ ստորերկրից անցքերի մուտքը կառավարութեան հրամանով փակված է, որովհետև հետաքրքիրները և յանկարծ հարստանալ ցանկացողներից շատերը մտնում էին այդ ծակերում և այլ ևս չէին վերադառնում։

Մի ծերունի ինձ մի շատ հետաքրքրական ճանապարհորդութիւն պատմեց Չարիսի-ֆէլէկի անցքի մասին։ Ընդ նրա արտագրութեան ժամանակ, ասաց նա, ես մի ընկերով հետ վեր առանք մի լապտեր և տօղրակ յարդ և սկսեցինք իրարու ետևից ներքև իջնել։ Մի քառորդ իջնելից վերի մեր ճանապարհը հորիզոնական զիջք ստացաւ։ Մի քանի անգամ աջ և ձախ չըջեցինք, այնուհետև չը գիտէինք թէ երկրի որ կողմն ենք դառնում։ Վերջին պտուղը մեզ հանեց ճանապարհի երեք բաժանմանց վրա։ Մենք թող արինք ձախ կողմն և միջինը և ընտրեցինք աջակողմնը և այդտեղ մի քիչ յարդ անցնելու նշանի համար։ Օղը խոնավ էր և ծանր քամի քայտափռից ըզկնի դարձնաւ մեր ճանապարհը բաժանից այս անգամ երկու ճիւղի, մենք միջոց դէպի աջ գնացինք, թող արինք միւսը մեր ձախակողմնը նոյնպէս բաժանման կէտում յարդ անցնելով, հազիւ տասն և հինգ քայլ անցել էինք, յանկարծ մեր ճանապարհը լայնացաւ, մենք մտանք մի հիւսիսային քարեայ կամարի տակ։ Մեր աջ կողմ կարգաւ բարափոր սենեակներ էին շինած և ամեն մի սենեակի դռան մի քարէ աթոռ դրած։ Այսպիսի սենեակներ մինչև ութ համարեցինք, ութերորդ սենեակի հետ մեր ճանապարհը փակեց մի մեծ և գեղեցիկ քարեայ դուռն, որի վրա մի ջուկ տեսակ քանդակներ կային։ Շատ աշխատեցինք այդ դուռը բաց անել, բայց անկարելի եղաւ, մահաւանդ լինելով որ դա Չարիսի-ֆէլէկի դուռն պէտք է լինի, որից մահապաշտներ անպատու հասնելու չի մտնի, յետ դարձանք։

ԳԵՐՄԱՆԻԱ

Խշխան Բիսմարկի որդին նորիւրումն մի ծառ է խօսել պահպանողականների ժողովում առաջադիմականների դէմ, կծու և վիրաւորական խօսքեր գործածելով Լասկերի և Ռիստերի դէմ, նոյնպէս Բերլինի քաղաքային վարչութեան անդամների դէմ։ Բոլոր սպասամիտ գերմանական լրագրիները ծաղրում են այդ ծառը, ասելով որ կոմ Բիսմարկ, որ ինքն ոչինչով յայտնի չէ, բացի նրանով որ իր հօր ազգանունն է կրում, պէտք է աւելի յարգանքով վերաբերվէր դէպի այն մարդիկ, որոնք արդէն նշանաւոր էին մինչև որ կոմ Բիսմարկ դեռ զիմնագիտ էր։ Ազատամիտ կուսակցութեան առաջնորդ Ռիստեր քիչ օրից յետոյ ազատամիտների ժողովում կոմ Բիսմարկին հակառակ մի ծառ ասեց, ծաղրելով նրա առաջները, իսկ Բերլինի քաղաքային վարչութիւնը ղեկավարութիւն ունի երիտաւար կոմսին դատի կանչելու, վարչութեան դէմ նրա արտասանած վիրաւորական խօսքերի համար։

ԻՏԱԼԻԱ

Պարլամենտական մեծամասնութեան անդամների ժողովի մէջ Գեպրեոտի պնդում էր, որ պատգամաւորների ժողովի արձակուրդներից առաջ քուէարկվի ընտրողական օրէնքը ցուցակներով ընտրութեան ձևի հարցի հետ կից։

Սոյֆերինոսի մօտ եղած պատերազմի տարեգրքի առիթով «Popolo Romano»

Ներքուստ պատմութիւնը ստուգութիւնից զուրկ չէ, որովհետև աւանդութեամբ կը պատմեն վանեցիք, որ այդ անցքերը վանալ բերդի հետ հաղորդակցութեան ունեն գետնի տակից, աւելացնելով և խորհնացու նկարագրած հրաշալի ստորերկրեայ ապարանքները, որոնք Շամիրամ չինել է առեւել, էլ տարակուսի տեղիք չի մնար։ Բացի այդ նորիւրումն այդ քարածայրի դառնիւթաւ բացվեց մի այլ ստորերկրեայ ճանապարհ, սաղաքարերով ծածկած, որ դէպի ձորն է իջնում։ Տարակույս չը կայ, որ դա պատարտութեամբ է պաշարման ժամանակ, պահեստի ջրի պաշար հայթայթելու համար։ Այդ ճանապարհը ձորից բարձրանում հասնում է մինչև մեր յիշած ժայռի ստորոտը և ընդհատվում է նրա շարունակութիւնը։ Ինչպէս երևում է, դա ճարտարապետը բերդի ստորերկրեայ թշնամիներին չը մատնելու համար, մի գաղտնիք է ստեղծել և դրա համար էլ մի գաղտնիք բաշխել փորագրել է նոյն ժայռի վրա, այսինքն այնտեղ, ուր կտրվում է նրա շարունակութիւնը, գրոյց ժայռի վրա մի թիղ լայնութեամբ և երեք թիղ երկայնութեամբ ութ հատ խոր փորված նշաններ կան, որոնք իրարից երկու արջին հեռաւորութիւն ունեն։ Բերդի կառավարչին ի հարկ յայտնի կը լինէր թէ ստորերկրեայ մուտքը ի նշանի տակն է, որպէս զի պէտք եղած միջոցին դժուարութեան մէջ չընկնէ։ Այսպէս անգլիացի հնագետը այս բոլոր ստանդերի վրա, ստորերկրեայ ներքի մասին, տեղեկութիւն չունենալով, հողաբուրներն է միայն փորել տալիս։ Թերեւ այդ հնութիւնները, որոնցից հին պատմութեան համար մեծ գիւտ կարելի է սպասել, կը մնան հայոց հնագիտական ընկերութեան համար, որ տարակույս չը կայ, պիտի կազմվի մի օր։

Այս արեւելքից արեւմուտք ձգված ժայռի վերջին ծայրում (արեւմտեան կողմից) գտնվում է վանայ ամենամեծ բնակարանական արձանագրութիւն, որին տեղացիք Մհերի դուռ են անուանում։ Իսկ որ դա մի ահագին դռն նմանութիւն ունի, նկատել պէտք է որ բոլոր ժայռերի վրա եղած բնակարաններ ժամանակի դէմ ապահովացնելու համար տաշած, խորացրած է ժայռի մակերեսով, կտրծես մի հաստ քառանկյունի չորջանակի մէջ լինի դրած։

Վանեցից առասպելը այդ դռնան արձանագրութեան ետեւ, իր ձիւս հետ շղթայակապ դա-

լրագրիւր նկատում է, որ այդ պատերազմը խաղաղի ազատութեան մեծ գործի սկիզբն էր, որի համար Փրանսիական արեւելք թափվեցաւ խաղաղանի հետ միասին Այդպիսի յիշատակը չէ կարող ջնջվել ոչ հունիսի գործերի և ոչ վերջին տխուր անցքերի պատճառով։ Խաղաղանի և Փրանսիական մեծ ազգութիւնները պէտք է մշտապէս միմեանց դաշնակիցներ լինեն։

Պալերմոնի մէջ խաղական երիտասարդութիւնը փորձեց անկարգութիւններ գործել, բայց պոլիցիան խանգարեց նրան իր գործադրած եռանդոտ միջոցներով։ Զօրքերը ցրվեցին ամբոխին և մի քանի մարդ կաշահաւորեցին։

Միլանի մէջ պրեֆեկտի տան առաջ նոյնպէս մի ցոյց կատարվեցաւ, որի ժամանակ ամբոխը կանչում էր «Ահեցք թագաւորը, կեցցեն խաղական զօրքերը»։ Պրեֆեկտը դուրս եկաւ տանից և ասաց ժողովրդին, թէ ինքը կատարելապէս զնահատում է նրանց ոգևորող զգացմունքները, բայց խորհուրդ է տալիս հանդիստ մնալ և կարգապահութիւնը չը խանգարել։ «Կառավարութիւնը կարող է պաշտպանել ազգային պատիւը, նկատեց նա, մեր թագաւորի վեհանձն բնակարանութիւնը մի գրաւական է, որ նա կը ստիպի յարգել խաղաղան»։ Պրեֆեկտի ծառը ծափահարութիւններով ծածկվեցաւ և ամբոխը հեռացաւ տանից որ և է անկարգութիւն անկու։

Խմբագիր—հրատարակող ԳԵՐՄԱՆԻԱ ԱՐԹՐՈՒՆԻ

Բաւար ժամանակով պահած փակած ունի Մհեր անունով սարափելի անձնագրութիւնը, որ մի օր շղթայակոտոր դուրս պիտի յարձակվի աշխարհին վերջ տալու համար։ Հակառակ այդ ահաւոր աւանդութեան, արձանագրութեան աջ ստորոտում կաթիլ ջրից հաւաքած մի փոքրիկ աւազան կայ, որի մէջ հազիւ մի ձեռք կարող է տեղաւորվել, այդ տեղ են դիմում վանայ սիրոյ տէր կուսանք, սիրոյ խորհուրդներով, իւրեանց աջ ձեռքը մեկնում են աւազանի մէջ և այնտեղից աւազի հատիկներ են դուրս հանում, ամեն մի հատիկը իրան գոյնով և տեսակով խորհրդի բացատրութիւն է բովանդակում իր մէջ։

Բաւական եմ համարում այսքանը վանայ հնութիւնների վրա խօսել, այդ աշխարհը այնքան հարուստ է գոյանով, որ տարակույս է յարուցանում այժմեան վանք, արդեօք հին պատմական վան համարել։ Խորհնացու նկարագրած Շամիրամակերտը նոյնպէս բոլորովին նմանութիւն չունի։

Վանայ ծովը 4 կղիներ ունի, որոնցից երեքը վանքեր են հայ ազգի փրկութեան համար աղօթող արեղաներով լցրած։ Մի ժամանակ, այդ կրօնաւորները վանեցոյ վրա ձախորդ աղեցութիւն ունէին իրանց աշխարհի ունայնութեան վրա առած խիստ քարոզներով, այնպէս որ, դոցա քարոզների աղեցութեան տակ երիտասարդները բնականաբար ծոցից փայտում էին վանքեր, մարդիկ ինչպէս կրօնաւորներ բերան գիտլին բոլոր սաղմուն ու նարեկի և Այգեանանից քաղաք իրանց գործին գնալիս մարդ կարծես պատանում էր խումբ խումբ ապուհներ, որոնք իրանք իրանց փափում, այսինքն սաղմուն էին կարգում։ Նոքա կամաւ իրանց անձը, ստոյկիկանց պէս, երկարվում էին թիւրքերի ծնծին և նախատինքին։ Այդ ժամանակի վանեցիները երկրային թագաւորութեան մոթերին թշնամի էին։ Այդ մոթեանց պրօպագանդիստներին մահացու հարված տուեց խորմեան իր աշակերտներով, որոնք աղգութիւն քարոզեցին։ Այժմ դուք այլ ևս չէն համարձակվում քարոզել, նրանց ժամանակն անցկացաւ, նրանց այլ ևս լուրեր չը կան։

(Կը շարունակուի)